

Հայաստանի Հանրապետություն

**«Էմերալդ ցանց»-Բնապահպանական տարածքների/սայտերի պատրաստում, Փուլ II»
դրամաշնորհային ծրագիր**

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ` No. AA 56/2016

Ընդհանուր տեղեկություն

«Էմերալդ ցանց»-ը բնապահպանական հատուկ նշանակության տարածքների (ԲՀՆՏ) ցանց է, որը ձևավորվում է Եվրախորհրդի «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» 1979 թ.-ի Բեռնի Կոնվենցիայի դրույթների ներքո:

Հայաստանի Հանրապետությունում «Էմերալդ ցանց»-ի ձևավորման աշխատանքները մեկնարկել են 2007 թ.-ին և մինչ երկրորդ փուլի մեկնարկը ընտրվել են ցանցում ընդգրկման 9 պոտենցիալ տարածքներ:

«Էմերալդ ցանց»-բնապահպանական տարածքների/սայտերի պատրաստում ծրագրի երկրորդ փուլի (2013-2016 թթ.) նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ավարտել էկոլոգիական ցանցի ձևավորման աշխատանքները:

Խորհրդատվական ծառայությունների անվանումը`

1. «2015 թ.-ին առաջարկված «Էմերալդ» տարածքների ազգային տվյալների բազայի ուսումնասիրություն, նոր տեսակների և ապրելավայրերի բացահայտում, պոտենցիալ տարածքների առաջարկում»:

Խորհրդատվական ծառայությունը (այսուհետ Ծառայություններ) ներառում է հետևյալ առաջադրանքները`

- «Էմերալդ» տարածքների ազգային տվյալների բազայի ուսումնասիրություն և բացթողումների վերհանում,
- «Էմերալդ» ցանցի ցուցակում ընդգրկման նպատակով նոր պոտենցիալ տարածքների քարտեզագրում,
- Արգելավայրերում այն տեսակների և ապրելավայրերի առկայության հստակեցում և քարտեզագրում, որոնք ընդգրկված են վերանայված տվյալների բազայում, սակայն «Էմերալդ» տարածքներ չեն առաջարկված,
- «Էմերալդ» տարածքների տվյալների բազայի վերանայում, ավարտուն տեսքի բերում և տեղադրում www.eionet.europa.eu կայքում,
- Դաշտային հետազոտությունների իրականացում,
- Շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներ,
- «Էմերալդ» ցանցի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում և տրամադրում շահագրգիռ կողմերին,
- Ընթացիկ հաշվետվությունների պատրաստում:

ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է համապատասխանող Անհատ Խորհրդատուներին (այսուհետ՝ Խորհրդատուներ) ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն ինքնակենսագրական՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Առնվազն մագիստրոսի կամ ավելի բարձր աստիճան «Քարտեզագիր», երկրատեղեկատվական համակարգի մասնագիտությամբ,
- Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ և փորձառություն,
- Առաջադրանքին առնչվող առարկայի ասպարեզում փաստաթղթերի վերլուծական և մշակման փորձ,
- Միջազգային այլ դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող նմանատիպ ծրագրերի իրականացնելու փորձառություն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Ինքնակենսագրականները պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչև 2016թ.-ի օգոստոսի 3-ը, ժամը 18:00 (տեղական ժամանակով):

Պարոն Գևորգ Ներսիսյան

ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար

ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 129, 0047

Էլ-փոստ՝ info@cep.am

Հեռ՝ +37410 65 16 31

Ֆաքս՝ +37410 65 00 89